

ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը եւ Ռումինիայի արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

շահագրգռված լինելով խորացնել երկու արտաքին գործերի նախարարությունների միջեւ գոյություն ունեցող քաղաքական երկխոսությունը 1991 թ. դեկտեմբերի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Ռումինիայի արտաքին գործերի նախարարության միջեւ խորհրդակցությունների մասին արձանագրության հիման վրա,

նշելով Միավորված ազգերի կազմակերպությունում, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունում, Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում, Եվրոպայի խորհրդում եւ այլ միջազգային կազմակերպություններում եւ կոնֆերանսներում համագործակցության բարձր մակարդակը եւ արդյունքները,

նպատակ ունենալով խրախուսել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումը եւ ամրապնդել գոյություն ունեցող համագործակցությունը Եվրոպայի միության եւ Յուլիսսատլանտյան պայմանագրի կազմակերպության հետ,

ընդունելով Ռումինիայի կարգավիճակը որպես Եվրոպայի միության ապագա անդամի 2007 թ. հունվարի 1-ից եւ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների եւ Նրանց անդամ պետությունների միջեւ գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ընդգրկումը Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ,

հաշվի առնելով Ռումինիայի անդամակցությունը Յուլիսսատլանտյան պայմանագրի կազմակերպությանը եւ Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ զարգացնել համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ. ներառյալ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի միջոցով,

արտահայտեցին իրենց պարտավորվածությունը հետեւյալի վերաբերյալ.

ՀՈՂՎԵՐ 1

Կողմերը կզարգացնեն քաղաքական երկխոսությունը եւ համագործակցությունը՝ որպես աջակցություն տարածաշրջանային եւ Եվրատլանտյան կայունությանը:

Այդ նպատակով Կողմերը հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ շարունակել իրենց ակտիվ համագործակցությունը Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում եւ ամրապնդել ԵԱՀԿ դերը որպես ԵԱՀԿ տարածաշրջանում հակամարտությունների խաղաղ կարգավորման միջոց. ներառյալ Հարավային Կովկասը:

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը Եվրոպական ինտեգրացիայի բնագավառում՝ ուղղված Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպայի միության միջեւ գործընկերության հաջող զարգացմանը եւ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը զարգացնելու համար Հայաստանի Հանրապետությանը աջակցելուն:

Կողմերը նաեւ կզարգացնեն երկխոսությունը եւ համագործակցությունը որեւէ այլ բնագավառում՝ վերոհիշյալ նպատակին հասնելու հետ կապված, ինչպես, օրինակ.

- ժողովրդավարության ամրապնդում եւ օրենքի գերակայություն, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի միջոցով,

- տարածաշրջանային համագործակցություն,

- Էներգետիկ անվտանգություն:

ՀՈՂՎԵՐ 2

Կողմերը կհամագործակցեն Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության հնարավորությունների լիարժեք օգտագործմանն ուղղված գործողությունները դյուրացնելու գործում:

Կողմերը կհամագործակցեն Եվրոպական ստանդարտների ընդունման եւ իրականացման բնագավառում, մասնավորապես.

1. ինստիտուցիոնալ եւ տնտեսական բարեփոխումների համար.
2. Էներգետիկայի ոլորտում համագործակցության եւ Եվրոպայի հետ ենթակառուցվածքային կապերի համար.
3. Եվրոպայի միության մասին հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար՝ տեղեկացնելով ողջ հասարակությանը Եվրոպայի միության եւ Եվրոպական ինտեգրացիայի շրջանակներում կատարվող գործընթացների մասին.
4. խրախուսելու համար համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ համագործակցությունը, կապերը եւ մարդկանց միջեւ շփումները:

ՅՈՒՐԱԿՑ 3

Եվրոպայի միության հետ կապված, Ռումինիայի ստանձնած պարտավորությունների համաձայն, Կողմերը կհամագործակցեն վիզային քաղաքականության, փաստաթղթերի անվտանգության, սահմանային հսկողության եւ միգրացիայի բնագավառներում:

ՅՈՒՐԱԿՑ 4

Կողմերը կհամագործակցեն՝ նպատակ ունենալով ամրապնդել Եվրատլանտյան գործընկերությունը եւ իրականացնել ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: Այս համագործակցությունը կիրականացվի.

1. Եվրատլանտյան գործընկերության շրջանակներում համագործակցությանը վերաբերող խնդիրների եւ Եվրատլանտյան ու տարածաշրջանային անվտանգության բնագավառում փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ խնդիրների շուրջ կանոնավոր համատեղ խորհրդակցությունների միջոցով.
2. Հայաստանի Հանրապետությանը Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրն իրականացնելուն աջակցելու համար երկկողմ համագործակցության բնագավառները սահմանելու միջոցով.
3. պաշտպանության ոլորտի բարեփոխման բնագավառում եւ հետաքրքրություններ կայացնող այլ բնագավառներում փորձի փոխանակում՝ համատեղ հանդիպումներ, խորհրդակցություններ, վերապատրաստում կազմակերպելու միջոցով.
4. միջազգային անվտանգության եւ Եվրատլանտյան համագործակցության հարցերի վերաբերյալ հասարակությանը իրազեկելու միջոցով.
5. այդ բնագավառներում աշխատող համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ համագործակցությունը/շփումները խրախուսելու միջոցով:

ՅՈՒՐԱԿՑ 5

2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածներում նշված բնագավառներում համագործակցությունը կիրականացվի՝ օգտագործելով հետեւյալ միջոցները եւ մեթոդները.

1. քաղաքական երկխոսություն բարձրաստիճան պաշտոնյաների եւ փորձագետների մակարդակով՝ այն հաճախականությամբ, որը կհամաձայնեցվի համատեղ.
2. համատեղ միջոցառումների կազմակերպում. երկու կողմերի փորձագետների եւ պաշտոնյաների մասնակցությամբ խորհրդակցություններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ եւ այլ ժողովներ.
3. վերապատրաստում Եվրոպական եւ Եվրատլանտյան համագործակցության վերաբերյալ սեմինարներ կազմակերպելու միջոցով եւ մյուս Կողմի կազմակերպած

միջազգային ու ազգային սեմինարներին յուրաքանչյուր Կողմից փորձագետների մասնակցության խրախուսում:

4. համատեղ համագործակցության նախաձեռնում եւ նախագծերի մշակում, ինչպես, օրինակ՝ միացյալ մեխանիզմներ եւ ուսումնական ծրագրեր, ընդգրկելով երկու երկրների համապատասխան գերատեսչությունների պետական պաշտոնյաներին:

5. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փորձագետների փոխանակում:

ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ 6

Սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացման համար Կողմերը կարող են մշակել ամենամյա ծրագրեր:

ՅՈՒՐԱՔԱՆՅ 7

Յուրաքանչյուր Կողմ սույն Փոխըմբռնման հուշագիրը կիրականացնի իր ազգային իրավական եւ վարչական դրույթներին համաձայն, իր հնարավորությունների սահմաններում եւ առկա ռեսուրսներին համապատասխան:

ՅՈՒՐԱՔԱՆՅ 8

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցման օրվանից, որով Կողմերը միմյանց կտեղեկացնեն իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ընթացակարգերի ավարտի մասին:

ՅՈՒՐԱՔԱՆՅ 9

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմնա երեք տարի: Դրա գործողության ժամկետը այնուհետեւ կարող է երկարաձգվել լրացուցիչ երեք տարի ժամկետով՝ Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

Կատարված է Երեւան քաղաքում, 2006 թվականի հոկտեմբերի 4-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն եւ անգլերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում որեւէ տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թ. հուլիսի 19-ից:

MEMORANDUM OF UNDERSTANDING BETWEEN THE MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF ROMANIA ON EUROPEAN AND EURO-ATLANTIC COOPERATION

The Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia and the Ministry of Foreign Affairs of Romania, hereinafter referred to as "the Parties",

Interested to deepen the existing political dialogue between the two Ministries of Foreign Affairs on the basis of the Protocol on Consultations between the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia and the Ministry of Foreign Affairs of the Romania, signed in Yerevan, on December 17, 1991,

Noting the high level and the results of the cooperation achieved so far in the United Nations Organization, in the Organization for Security and Cooperation in Europe, in the framework of the Organization of Black

Sea Economic Cooperation, Council of Europe and other international organizations and fora,

Aiming to promote further development of bilateral relations and to strengthen the ongoing cooperation with European Union and the North Atlantic Treaty Organisation (NATO),

Acknowledging Romania's status as future European Union member as of 1 January 2007 and the Agreement for Partnership and Cooperation between the Republic of Armenia and the European Communities and their Member States, as well as the inclusion of the Republic of Armenia into the European Neighbourhood Policy,

Taking note of the accession of Romania to the North Atlantic Treaty Organisation and the aspiration of the Republic of Armenia for intensifying the cooperation with NATO, including through the Individual Partnership Action Plan,

Have expressed their commitment to the following:

Article 1

The Parties will deepen political dialogue and cooperation in support of regional and Euro-Atlantic stability.

To this aim, the Parties confirm their readiness to continue their active cooperation within the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) and to strengthen the role of the OSCE as an instrument for a peaceful settlement of the conflicts in the OSCE area, including the Southern Caucasus.

The Parties shall be committed to promoting cooperation in the field of European integration aimed at the successful development of the partnership between the Republic of Armenia and the European Union within the European Neighbourhood Policy and supporting the Republic of Armenia to intensify its cooperation with NATO.

The Parties will also develop dialogue and cooperation in any other area relevant for achieving the above-mentioned goal, such as:

- strengthening democracy and the rule of law, including through the role of Council of Europe;
- regional cooperation;
- energy security.

Article 2

The Parties shall cooperate in facilitating the activities aimed at making full use of the possibilities available to the Republic of Armenia within the framework of the European Neighbourhood Policy.

The Parties shall cooperate in the field of adopting and implementing European standards in particular for:

1. institutional and economic reforms;
2. energy cooperation and infrastructure connections with Europe;
3. raising the public awareness about the European Union by informing

the general public about the processes within the European Union and the European integration;

4. encouraging cooperation contacts among relevant Non-governmental organizations and people-to-people contacts.

Article 3

Subject to commitments undertaken by Romania in relation to European Union, the Parties shall cooperate in the fields of visa policy, document security, border control and migration.

Article 4

The Parties shall cooperate towards strengthening the Euro-Atlantic partnership and implementing the Individual Partnership Action Plan of the Republic of Armenia with NATO. This cooperation shall be carried out through:

1. Regular joint consultations on issues related to cooperation in the framework of the Euro-Atlantic Partnership and other issues of mutual interest for the Euro-Atlantic and regional security;

2. Identifying areas of bilateral cooperation in support of the implementation of the Republic of Armenia's Individual Partnership Action Plan;

3. Exchange of experience in the field of defence sector reform and other areas of interest by organizing joint meetings, consultations, trainings;

4. Informing the general public on issues of international security and Euro-Atlantic cooperation;

5. Encouraging cooperation/contacts among relevant NGOs working in these fields.

Article 5

Cooperation in the areas defined in Articles 2, 3 and 4 shall be realized by using the following means and methods:

1. Political dialogue at senior officials and expert level, at a frequency that will be commonly agreed;

2. Organizing joint events: consultations, meetings, conferences, round tables and other fora with participation of experts and officials of both Parties;

3. Training through organizing seminars on European and Euro-Atlantic cooperation and encouraging participation of experts from each Party in international and national seminars organized by other Party;

4. Developing joint co-operation initiatives and projects, such as, twinning mechanisms and training programs involving state officials from the relevant institutions of both countries;

5. Exchange of experts in sectors of mutual interest.

Article 6

The Parties may elaborate Annual Plans for the implementation of the present Memorandum of Understanding.

Article 7

Each Party shall carry out the implementation of the present Memorandum of Understanding in conformity with its national legal and administrative provisions and with its competence and available resources.

Article 8

The present Memorandum of Understanding shall enter into force on the date of the last notification by which the Parties inform each other on the fulfilment of the relevant procedures provided by their national legislation.

Article 9

The present Memorandum of Understanding shall remain into force for a period of three years. Its term may be renewed thereafter for additional new three-years periods by mutual written agreement of the Parties.

Done at Yerevan, on October 4, 2006, in two originals each in Armenian, Romanian and English languages, all texts being equally authentic. In the event of any divergence regarding interpretation, the English text shall prevail.

The Agreement has entered into force on July 19, 2007.